

ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏ-ԼԵԶՎԱԲԱՆԸ
(Գրիգոր Ղափանցյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

Լրացավ հայ լեզվաբանության և հայագիտության խոշոր դեմքերից մեկի՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գրիգոր Այվազի Ղափանցյանի ծննդյան 100-ամյակը: Մեծ հայագետ-լեզվաբանը իր գիտական-ստեղծագործական ողջ կյանքը ի սպաս դրեց հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության և ընդհանուր լեզվաբանության ուսումնասիրությանը՝ մեծ ավանդ բերելով այդ գործին և դրանով իսկ հաստատուն տեղ գրավելով հայագիտության մեջ:

Ծնվել է 1887 թ. Աշտարակում, նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում. 1899 թ. կրթությունը շարունակելու նպատակով մեկնել է Պետերբուրգ, որտեղ գիմնազիան ավարտելուց հետո սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վրացական բաժնում. այնտեղ նա միաժամանակ լսել է դասախոսություններ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության և ընդհանուր լեզվաբանության վերաբերյալ: Աշակերտել է Ն. Մառին, Կ. Զալեմանին, Ի. Բոդունին դե-Կուրտենենին, Ն. Ադոնցին և այլոց, որոնցից հատկապես Բոդունին դե-Կուրտենենին մեծ դեր է խաղացել նրա լեզվաբանական հայացքների ձևավորման մեջ:

1913 թ. ավարտելով համալսարանը և ձեռք բերելով գիտելիքների հարուստ ու հիմնավոր պաշար՝ Գ. Ղափանցյանը վերադառնում է Հայաստան, նշանակվում է ջմիաձնի Գևորգյան ճեմարանի դասախոս՝ դասավանդելով մի շարք լեզվաբանական և ընդհանրապես հայագիտական առարկաներ: 1918 թ. մանկավարժական գործունեությունը շարունակում է Նրևանի դպրոցներում: Միաժամանակ ծավալելով գիտահետազոտական աշխատանքներ հայագիտության ասպարեզում՝ նա հենց այդ տարիներից ձեռք է բերում ճանաչում ոչ միայն որպես մանկավարժ, այլև որպես գիտության մշակ: Եվ օրինաչափ էր, որ Նրևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրերից Գ. Ղափանցյանը հրավիրվում է համալսարան, ստանում պրոֆեսորի կոչում, դասավանդում գրաբար, հայերենի պատմահամեմատական քերականություն, ուրարտերեն, ընդհանուր լեզվաբանություն. երկար տարիներ միաժամանակ ղեկավարում է ընդհանուր լեզվաբանության ամբիոնի, ապա նաև Ն. Մառի անվան կաբինետի աշխատանքները: Նա դասախոսական լալն գործունեություն է ծավալել մինչև իր կյանքի վերջին տարիները (լեզվաբանության դասընթաց է կարդացել նաև Խ. Աբովյանի անվան և ռուսական մանկավարժական ինստիտուտներում): Եվ այդ ողջ ժամանակաշրջանում դասախոսական աշխատանքին զուգահեռ ստեղծագործել է, ծավալել գիտական լալն գործունեություն: 1942 թ. նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, այնուհետև՝ նաև Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Գ. Ղափանցյանը գիտահետազոտական աշխատանքներով սկսել է զբաղվել դեռևս ուսանողական տարիներից. մասնակցել է Ն. Մառի կազմակերպած հնագիտական պեղումներին, ուսումնասիրություններ կատարել համեմատական լեզվաբանության և հայոց լեզվի պատմության բնագավառներում և այլն:

Մասնագետների մեծ գնահատանքին է արժանացել նրա ուսանողական ավարտական աշխատանքը՝ «Հնդկավրուպական ետնալեզվային բաղաձայնները հայերենում», որը 1914 թ. տպագրվել է «Արարատ» ամսագրում: «Արարատում» են հրատարակվել նաև նրա «Հնություն մի քանի հիշատակարաններ» (№ 1) և «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու» (№ 3) հոդվածները, որոնցով և նշանավորվում է Ղափանցյանի մուտքը հայագիտության ասպարեզ: Այդ շրջանից անընդմեջ նա շարունակել է հետազոտությունները հայոց լեզվի ու հայ ժողովրդի պատմության, Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդների, նրանց լեզուների և լեզվական առնչությունների ուղղությամբ: Սակայն նրա գիտական գործունեության բեղմնավոր շրջանն սկսվում է 1930-ական թթ., երբ, կարծեք, ի մի բերելով մինչ այդ կատարած հետազոտությունների արդյունքները, իրար հետևից հրատարակում է լեզվաբանության և ընդհանրապես հայագիտության համար կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ աշխատություններ, որոնց թիվն անցնում է վեց տասնյակից և որոնցով նա իր հաստատուն տեղն է գրավում հայագիտության մեջ: Եվ պատահական չէ, որ 1943 թ., երբ հիմնադրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, նա դառնում է ակադեմիայի հիմնադիր անդամներից մեկը՝ ղեկավարելով հասարակական գիտությունների բաժանմունքի աշխատանքները, իսկ 1950 թ. մինչև 1956 թ.՝ լեզվի ինստիտուտի աշխատանքները:

Շատ լայն է եղել Գրիգոր Ղափանցյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայոց լեզու, հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, ընդհանուր լեզվաբանություն, պատմահամեմատական լեզվաբանություն, բեվեռագրագիտություն, պատմություն, հնագիտություն, ազգագրություն, դիցաբանություն և այլն: Սակայն նրան հատկապես գրավել են հայոց լեզվի պատմության հնագույն շրջանը, մասնավորապես հայերենի ծագման ու կազմավորման հարցերը: Քաջ գիտակցելով, որ յուրաքանչյուր լեզվի պատմություն սերտորեն կապված է այդ լեզվով խոսող ժողովրդի պատմության հետ, նա իր գիտելիքներն ու պրպտուն միտքը ի սպաս է դնում հայ ժողովրդի, նրա լեզվի ու մշակույթի ծագման ու կազմավորման և հետագա զարգացման կնճռոտ խրնդիրները ուսումնասիրելու գործին: Եվ քանի որ հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանն ուսումնասիրելու համար անհրաժեշտ էր հետազոտել նաև ժամանակի ազդակից և ոչ ազդակից ժողովուրդների լեզվական առնչությունները, նա հատուկ աշխատություններ է նվիրում փոքրասիական լեզուների և ժողովուրդների պատմության ուսումնասիրությանը:

Անհնար է մեկ հոդվածի սահմաններում համակողմանի քննել մեծ գիտնականի ամբողջ գիտական արտադրանքը և ներկայացնել այն ամենը, ինչ նա ներդրել է հայագիտության մեջ՝ խթանելով նրա զարգացումը: Նրա գիտական հարուստ ժառանգությունը առանձին մենագրությունների և ուսումնասիրությունների նյութ կարող է դառնալ:

Այստեղ մենք կաշխատենք համառոտակի ներկայացնել նրա գիտական լայն գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները՝ տալով գիտնականի հիմնարար աշխատությունների ընդհանուր բնութագրերը:

Մեծ է Գրիգոր Ղափանցյանի դերը հայ տեսական լեզվաբանական մտքի զարգացման մեջ: Այս բնագավառում իր կարևոր տեղն ունի նրա «Ընդհանուր լեզվաբանություն» մեծարժեք աշխատությունը¹, որը թեև դրված է որպես բուհական ձեռնարկ, սակայն դուրս է եկել այդ սահմաններից և մի լուրջ ու տեսական մեծ կարևորություն ունեցող աշխատություն է, իր տեսակի մեջ առաջինը հայ իրականության մեջ՝ գրված ժամանակի սովետական լեզվաբանության ամենաբարձր մակարդակով: Այստեղ հեղինակը, օգտագործելով լեզվաբանական գիտության նվաճումները և մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքներով վերանայելով այդ գիտության հիմնագրությունները, աշխատել է տալ մարդկային լեզվի, լեզվական բարդ երևույթների տեսական

¹ Գր. Ղափանցյան. Ընդհանուր լեզվաբանություն. Երևան, 1939:

վերլուծությունը, քննության է առել լեզվական շատ իրակություններ և լեզվի տեսության գրեթե բոլոր հարցերը (այդ թվում նաև իր ժամանակի համար վիճաբանական ու կնճռոտ շատ հարցեր)՝ հայերենի ընձեռած հարուստ նյութի հիման վրա վերանայելով և խորացնելով լեզվաբանական շատ հասկացություններ և սկիզբ դնելով ընդհանուր լեզվաբանական նոր ուսումնասիրությունների հայ իրականության մեջ:

Լեզվի բնորոշման, լեզվի կառուցվածքի ու զարգացման հարցերը քննելիս նա իր ուսումնասիրությունների հիմքում դրել է այն դրույթը, որ լեզուն պատ-



մահասարակական երևույթ է, «մարդու կողմից ձեռք բերած մի նվաճում, պատմականորեն մի բարձր արվեստ, վերնաշենքային մի բարձր կուլտուրա»²: Լեզուն համարելով վերնաշենքային՝ Ղափանցյանը, իհարկե, տուրք է տալիս այն ժամանակներում իշխող լեզվի նոր ուսմունքին (Մառի ուսմունքին): Սակայն ի պատիվ նրա պետք է ասել, որ նա հիմնականում կարողացել է հաղթահարել ժամանակի իշխող տեսությունը լեզվի ըմբռնման և նրա էությունը բացահայտելու հարցում: Առաջնորդվելով մարքսիզմի դասականների դրույթներով և մեջբերելով նրանց ձևակերպումները լեզվի հասարակական բնույթի, նրա «ռեալ գիտակցություն» լինելու և նրա գործառական էությունի մասին՝ գիտնականը հատուկ տեղ է հատկացնում լեզվի հասարակական էությունը, դերը և գործառական առանձնահատկությունները բացահայտելուն:

Լեզվի ծագումն ու զարգացումը կապելով մարդկային հասարակության հետ՝ հեղինակը առաջ է քաշում այն դրույթը, որ ինչպես նախնական ցեղերի միացմամբ ու խաչավորմամբ կազմավորվել են ժողովուրդները, ապա և աղ-գերը, նույն ձևով էլ ցեղային լեզուների խաչավորմամբ կազմվել են ժողովուրդների լեզուները, որոնք էլ ազգերի կազմավորմանը զուգընթաց վերածվել են ազգային լեզուների: Սա լեզուների առաջացման այն տեսակետն է, որ, ինչպես կտեսնենք ստորև, ընկած է նրա՝ հալոց լեզվի ծագման հարցերի քննության հիմքում:

Շակագրվելով Մառին՝ Ղափանցյանը իրեն հատուկ խորամտությամբ քննում է լեզուների ցեղակցության հարցը: Լիովին ընդունելով լեզուների ծագումնաբանական դասակարգումը՝ նա գտնում է, որ լեզուների այլևայլ տարրերի համեմատությամբ պետք է վերականգնել ավելի նախնական վիճակը, այն վիճակը, որից մեզ չեն հասել արձանագրված տեղեկություններ. «Համեմատելով պատմական այդ լեզվի ձևերն ազգակից այլ լեզուների նման ձևերի հետ, կարող ենք մոտավորապես վերականգնել ավելի հին տեսակները»³: Այս առումով ուշագրավ են նրա մտքերը հնչյունական օրենքների վերաբերյալ: Սահմանադատվելով Մառից և զարգացնելով երիտքերականների, ապա նաև սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների դրույթները՝ հնչյունական օրենքի մասին՝ Ղափանցյանն ընդունում է հնչյունական օրենքների գոյությունը որպես լեզվի զարգացման հիմնական օրինաչափություններից մեկի՝ «ընդհանուր պատմական հնչյունափոխության» դրսևորում: Ուշագրության արժանի է

² Նույն տեղում, էջ 19:

³ Նույն տեղում, էջ 12:

ներառյալ դիտողությունը, որ հնչյունական փոփոխությունները և հնչյունական օրենքները արդյունք են հասարակության մեջ առաջ եկած արտասանական նոր տրամադրության, որը «իբրև անհրաժեշտություն ի հայտ է գալիս հասարակայնորեն»։ Պատմահամեմատական մեթոդին և լեզուների ծագումնաբանական դասակարգմանը Գ. Ղափանցյանը նորից անդրադարձավ իր գիտական գործունեության վերջին շրջանում «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզվի զարգացման ստադիալականության մասին» Ն. Մառի հայացքների քննադատությունը՝ աշխատության մեջ⁴, որտեղ քննադատելով Մառի՝ լեզուների խաչավորման և զարգացման ստադիալականության տեսությունը, վերագնահատում է պատմահամեմատական լեզվաբանության և վերջինիս ուսումնասիրության մեթոդը։ Խոսելով լեզուների ծագումնաբանական դասակարգման մասին և իրավամբ նշելով, որ լեզուների ազգակցությունը կարող է լինել մերձավոր ու հեռավոր և որ դա (ազգակցությունը) գալիս է ընդհանուր աղբյուրից, հեղինակը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ իր այն կարծիքին, թե «լեզուների ազգակցությունը կարող է արդյունք լինել նաև նրանց հետագա մերձեցման կամ փոխադարձ ներթափանցման՝ շնորհիվ հասարակական-տնտեսական, էթնիկական և քաղաքական այն պայմանների, որոնք նպաստում են նրանց համախմբմանը, շփմանը կամ աղբյուրությունը»⁵։

Լեզվի տեսության՝ մասնավորապես հայոց լեզվի տեսության համար մեծ արժեք է ներկայացնում նրա՝ լեզվական միավորների քննությունն ու մեկնությունը։

Գ. Ղափանցյանի լեզվաբանական հայացքների ձևավորման մեջ մեծ դեր է խաղացել իր ուսուցիչ Բոդուեն դե-Կուրտենեն։ Հայտնի է, որ Բոդուեն դե-Կուրտենեն է մշակել հնչույթի տեսությունը, որը հետագայում իր զարգացումը գտավ հատկապես Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների մոտ, որոնք և հիմնադրեցին հնչույթաբանությունը որպես լեզվաբանական առանձին գիտակարգ։ Հետևելով իր ուսուցչին և ստեղծագործաբար զարգացնելով նրա տեսությունը հնչույթի, որպես լեզվական միավորի մասին, Ղափանցյանը առաջինը հայ լեզվաբանության մեջ, ելնելով լեզվի հասարակական բնույթից, հնչյունի մեջ տարբերակում է երեք կողմ՝ բնագիտական (բնախոսական և ֆիզիկական), հոգեկան և սոցիալ-պատմական՝ վերջինիս տակ հասկանալով նրա հասարակական արժեքը։ Հնչույթի համար նա գործածում է «ֆոնեմա» միջազգային տերմինը, կամ «հնչյուն-ֆոնեմա»։ Քանի որ այդ ժամանակաշրջանում դեռևս մշակված չէր ընդհանուր լեզվաբանության հայերեն տերմինաբանությունը, լեզվական իրավություններն անվանելու և լեզվաբանական շատ հասկացությունների համար նա հաճախ է գործածում միջազգային տերմիններ։ Ղափանցյանը առաջինն էր հայ լեզվաբանության մեջ, որ փորձեց ցույց տալ նաև հնչյունի գործառական արժեքը՝ դիտելով այն որպես «բովանդականիշ կամ ֆունկցիոնալ էլեմենտ»⁶։ Հայ լեզվաբանության համար մեծ արժեք է ներկայացնում հնչյունափոխության քննությունը։ Աշխատության մեջ հեղինակը ներկայացրել է հնչյունափոխության՝ ընդհանուր լեզվաբանության մեջ դիտված բոլոր տեսակներն ու գործոնները՝ դրանց քննությունը հարստացնելով հայերենի ընձեռած հարուստ նյութով։ Հնչյունափոխության բոլոր դեպքերը նա խմբավորում է երկու հիմնական տեսակների մեջ՝ դիրքային ու ընդհանուր պատմական, ըստ ամենայնի քննելով դրանցից յուրաքանչյուրը։ Գրիգոր Ղափանցյանն առաջինն էր, որ հայ լեզվաբանության մեջ մտքորեն նաև ձևույթի, որպես լեզվի նվազագույն իմաստակիր միավորի գաղափարը, նշելով այն միջազգային տերմինով՝ «մորֆեմ» կամ կոչելով պար-

⁴ Գր. Ղափանցյան. Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզվի զարգացման ստադիալականության մասին Ն. Մառի հայացքների քննադատությունը. Երևան, 1951։

⁵ Նույն տեղում, էջ 6։

⁶ Գր. Ղափանցյան. Ընդհանուր լեզվաբանություն, էջ 287։

ւղապես «ձև»: «Մորֆեմի» մեջ տարբերակելով երկու տեսակ՝ հիմնական և երկրորդական, գիտնականը քննում է նրանց իմաստային ու գործառական առանձնահատկությունները և տալիս հետևյալ բնորոշումը. «Այսպիսով մենք տեսնում ենք, որ կան հիմնական և երկրորդական ձևեր, իսկ երկրորդականների մեջ՝ երկու տեսակ ձևաիմաստավոր մասեր, առաջինը ցույց է տալիս որոշ սահմանագծում այդ հիմնական գաղափարի համար, նրա սահմանորոշումը կամ կոնկրետավորումը ըստ նոր իմաստի, և դրանք կոչվում են «բառաստեղծական» կամ «բառակազմովի» երկրորդական ձևեր... իսկ երկրորդը ցույց է տալիս բառի հարսբերությունը կամ կապը նախադասության մեջ այս կամ այն բառի հետ, մատնանշում է բառի, այսպես ասած, շարահյուսական դերը (ֆունկցիան), բառի կապական հարաբերությունները: Այդ իսկ պատճառով էլ պիտի սահմանենք երեք «ձև» կամ «մորֆեմ», մեկը՝ հիմնական կամ արմատական, իսկ մյուսները՝ երկրորդական՝ բառաստեղծական երկրորդական ձև և բառահարաբերության երկրորդական ձև»: Մենք այսքան ընդարձակ մեջբերում կատարեցինք ցույց տալու համար, թե նա ինչպիսի ճշտությամբ է բնորոշել ձևովը և որ նրա սահմանումն ու դասակարգումը, մասնակի տերմինային ճշգրտումներով, գործածվում են առ այսօր:

Աշխատության մեջ հատուկ քննության նյութ են դարձել նաև լեզուներում գործող քերականական միջոցները, լեզուների քերականական կառուցվածքների առանձնահատկությունները և դրանց հետ կապված՝ լեզուների ձևաբանական դասակարգման հարցը: Լեզուների քերականական կառուցվածքի քննության ժամանակ առանձին ուշադրության են արժանացել ընդհանուր լեզվաբանական այնպիսի կարևոր ու առանցքային խնդիրներ, ինչպիսիք են լեզվի և մտածողության, լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցերը:

«Բառագիտություն» բաժնում, որով ավարտվում է գիրքը, հեղինակը քննում է բառի ձևավորման, լեզվի բառապաշարի, բառերի դասակարգման և բազմաթիվ այլ հարցեր: Նա հատուկ ուշադրություն է նվիրում հատկապես իմաստաբանությանը, բառիմաստի փոփոխություններին ու դրանց տեսակներին: Եվ այդ բոլորը՝ հարուստ փաստական նյութի, մասնավորապես հայերենի բառային կազմի գիտական խոր ու համակողմանի վերլուծություններով:

«Ընդհանուր լեզվաբանություն» մի նոր էջ բացեց հայ լեզվաբանության պատմության մեջ, նոր աստիճանի բարձրացրեց հայ լեզվաբանական տեսական միտքը: Այն հսկայական նյութ է պարունակում նաև հայոց լեզվի պատմության և ժամանակակից հայերենի համար:

Գ. Ղափանցյանի գիտական գործունեության երկրորդ, կարելի է ասել, առավել կարևոր բնագավառը հայագիտությունն է:

Ղափանցյանի գիտնականին միշտ էլ հետաքրքրել են հայոց լեզվի և հայ ժողովրդի ծագման հարցերը, որոնց ուսումնասիրությամբ նա զբաղվել է սկսած դեռևս ուսանողական շրջանից՝ Մառի հետ պեղումներին մասնակցելուց և ապա իր ամբողջ գիտական-ստեղծագործական կյանքում: Նշելով իր այն տեսակետից, որ հայերենը կազմավորվել է այլ լեզուների հետ խաչավորվելով՝ նա 1930-ական թթ. ձեռնամուխ եղավ հայերենի և Փոքր Ասիայի հնագույն լեզուների առնչակցությունների ուսումնասիրությանը և իրար հետևից հրատարակեց մի շարք աշխատություններ՝ նվիրված այդ հարցերին: Քաջ տիրապետելով փոքրասիական մի շարք լեզուների (խեթերեն, ուրարտերեն, խուրիերեն, պալայերեն)՝ նա սեպագիր արձանագրությունների խորագնին ուսումնասիրությամբ փորձեց պարզել մի կողմից հայերի էթնիկական կապերը հարևան ժողովուրդների հետ, մյուս կողմից՝ հայերենի հարաբերակցությունը խեթերենի, ուրարտերենի և այլ հնագույն լեզուների հետ: Իր ուսումնասիրությունների արդյունքները նա հանրագումարի բերեց «К происхождению армянского языка» աշխատության մեջ, որտեղ հանգամանորեն քննության է առնում հայերենի կազմավորման հարցը: Այստեղ համառոտակի շարադրելով լեզուների, մասնավորապես հայերենի հնագույն շրջանի ուսումնասիրության

իր մշակած հիմնական սկզբունքները և քննադատելով Մառին՝ նա գրում է, որ այդպիսի ուսումնասիրության հիմնական մեթոդը պատմահամեմատական մեթոդն է, չնայած միաժամանակ նշում է, իր կարծիքով, այդ մեթոդի որոշ սահմանափակությունները:

Լեզուների ցեղակցության հարցին անդրադառնալով՝ նա որոշակիորեն պաշտպանում է լեզուների խաչավորման տեսությունը և հենց այդ սկզբունքից ելնելով էլ բացատրում հայոց լեզվի կազմավորման գործընթացը: Լեզվական տվյալների՝ քերականական կարգերի ու միջոցների, բառակազմության ու բառահարաբերության տեխնիկայի, հնչյունական համակարգի և արմատների ու մասնիկների համեմատական քննությունից դալիս է այն եզրակացության, որ հայերենն ավելի շատ կապվում է, այսպես կոչված, փոքրասիական կամ ասիանիկ (խեթական, խուռի-ուրարտական ու քարթվելական) լեզուների, քան թե հնդեվրոպական լեզվաընտանիքի հետ: Թվելով հայերենի հնդեվրոպական ծագում ունեցող մասնիկները և գտնելով, որ դրանց թիվը չի անցնում 30-ից, նա այն կարծիքն է հայտնում, թե այդքան մասնիկ էլ կարելի է գտնել ասիանական ծագումով: Անցնելով բառապաշարին նա գրում է. «Ստուգապես իբրև հնդեվրոպական ճանաչված բառերի քանակը կազմում է տասը տոկոսից ոչ ավելին: Հետևաբար մնացած ամբողջ զանգվածը, ոչ փոխառյալ բառերի, որոնք անկասկած մեծ մասամբ բնիկ հայկական են, ըստ ծագման պետք է համարվի տեղական ասիանական»⁸:

Նրա ընդհանուր եզրակացությունն այն է, որ «հայոց լեզուն դուրս է եկել փոքրասիական («ասիանական»)՝ ըստ Պ. Կրեյմերի տերմինաբանության) լեզվական ենթաշերտից, սկզբնապես գոյություն ունենալով խեթական, խուռի-ուրարտական ու վրացական էթնիկական աշխարհի ու լեզուների միջև: Իսկ հայերենի հնդեվրոպական շերտը, որ առաջ է եկել առավելապես գուցե կիմերա-սկյութական, կելտական (գաղաթական), աքեական (հունական) ներխուժումների հետևանքով, կողմնակի, թեև կարևոր, ծագումնաբանական ներդրում է, որ, իհարկե, չի բացառում նաև ուրիշ հնդեվրոպացիների (արիացիների, փուլոգացիների և այլն) ազդեցությունը»⁹: Այս տեսակետը նա հետագայում զարգացրեց իր վերջին՝ հետմահու լույս տեսած «Հայոց լեզվի սլաոմություն» աշխատության մեջ, որտեղ արդեն լեզվական նյութի լրացուցիչ ուսումնասիրության հիման վրա ընդգծում է հայերենի ուժեղ հնդեվրոպական բնույթ ունենալը, սակայն շարունակում է մնալ այն կարծիքին, թե հայերենը խաչավորված լեզու է: «Հայերենը ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի տարատեսակ խաչավորված լեզու»¹⁰:

Այսպիսով, Գ. Ղափանցյանի՝ հայոց լեզվի կազմավորման տեսության հիմնական ելակետային դրույթն այն է, որ նա ժողովուրդների կազմավորման գործընթացի բնորոշ գծերը, մասնավորապես խաչավորումը, մեխանիկորեն տարածում է լեզուների կազմավորման գործընթացի վրա, ընդունելով նաև դրանց խաչավորումը: Ղափանցյանին ճիշտ տեսական ընդհանրացումներ կատարելուն խանգարեց հիմնականում ժամանակի գիտության վիճակը: Փոքրասիական հին մեռած լեզուներից շատերը այն ժամանակ դեռևս ուսումնասիրված չէին, ճշտված չէին նրանց ազգակցական կապերն ու որ ընտանիքներին պատկանելը, և այդ պատճառով հաճախ խիստ դժվարություն էր ներկայացնում դրանց ընդհանրությունների աղբյուրը բացահայտելն ու ճիշտ մեկնություն տալը: Չնայած տեսության այդ խոցելի կողմին՝ Գ. Ղափանցյանի աշխատությանը կատարած աշխատանքները մեծ և անգնահատելի ներդրում էին հայագիտության մեջ: Հայերենի ու հայ ժողովրդի կազմավորման հարցերը լսնելով իրենց անբակտելի կապի մեջ և ճիշտ կերպով առաջ քաշելով հայոց լեզվի կազմավորման գործընթացի ուսումնասիրության համար հայերենի

⁸ Г. Капанцян. К происхождению армянского языка. Ереван, 1946, с. 31.

⁹ Նույն տեղում, էջ 40, 41:

¹⁰ Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1957, էջ 12:

ամբողջ լեզվական նյութի քննության և դանազան հին ու հնագույն լեզուների հետ ունեցած ընդհանրությունների ու առնչակցությունների վերհանման անհրաժեշտությունը և այդ մոտեցմամբ քննելով հայերենը՝ նա դրանով իսկ մեծապես ընդարձակեց հայերենի ուսումնասիրության շրջանակները՝ հիմք դնելով հետագա նորանոր ուսումնասիրությունների: Այս առումով առանձնապես մեծ են նրա ծառայությունները հայերեն, ուրարտերեն, խեթերեն, պալայերեն, խուրերեն, ասուրերեն և այլ լեզուների աղերսակցությունները պարզելու գործում:

Գ. Ղափանցյանը Սովետական Միության խոշորագույն ուրարտագետներից էր: Նրա «Ուրարտուի պատմություն» աշխատությունը¹¹ Ուրարտուին ու նրա պատմությունը նվիրված մի ընդարձակ ու արժեքավոր ուսումնասիրություն է՝ հիմնված արձանագրությունների ու նյութական մշակույթի մնացորդների քննության վրա: Լինելով մեծ ներդրում ուրարտագիտության բնագավառում՝ այն որոշակի արժեք է ներկայացնում նաև հայերի ու հայերենի նախապատմության համար: Գիրքը բաղկացած է 4 մասից: Առաջին մասը նվիրված է Ուրարտուի նախապատմությանը, Ուրարտուի, ուրարտացիների և ուրարտերենի ու նրանց ծագման քննությանը, ուրարտերենի համեմատական քերականությանը: Երկրորդ մասում արձանագրությունների նյութի հիման վրա ներկայացված են պատմականորեն կազմավորված Ուրարտուի ներքին կյանքը, տնտեսական, հասարակական, պետական ու վարչական կառուցվածքները, քաղաքական վիճակը: Երրորդ մասում ուսումնասիրված է Ուրարտուի արտաքին-քաղաքական պատմությունը, ապա, որպես հավելված, նկարագրված են պեղումների շնորհիվ հայտնաբերված Ուրարտուի նյութական մշակույթի մնացորդները:

Ուրարտերենի և հայերենի առնչակցությունների հարցին նա անդրադարձել է ուրարտերենի համեմատական քերականությանը նվիրված բաժնում: Ղափանցյանը ընդհանրապես իր աշխատանքներում բերելով ուրարտերենի և խեթերենի, հայերենի և ուրիշ հնդեվրոպական լեզուների բառաքերականական համընկումները և ելնելով «ասիանիկ լեզուներ» այժմ արդեն հնացած հասկացությունից, այդ լեզուների մեջ է դասում ծագումով բոլորովին տարբեր, այդ թվում նաև այնպիսի ականհայտ հնդեվրոպական լեզուներ, ինչպիսիք են հայերենն ու խեթերենը: Իրեն հատուկ խորամտությամբ համեմատական քննության ենթարկելով սեպագիր արձանագրությունների նյութը և բացահայտելով այդ լեզուներում բազմաթիվ հնդեվրոպական տարրերի առկայության փաստը՝ Ղափանցյանը հետևողականորեն չի կիրառում պատմահամեմատական մեթոդը, որի հետևանքով այստեղ տեղ են գտել կասկածելի ստուգաբանություններ: Հաճախ հաշվի չառնելով համեմատվող բառերի տեսակարար կշիռը այդ լեզուների ընդհանուր բառապաշարում, նա հանգում է հայերենի, նաև ուրարտերենի ու խեթերենի երկբնույթ լինելու տեսակետին և ընդհանուր տարրերի առկայությունը բացատրում որպես այդ լեզուների խաչավորման հետևանք: Չնայած դրան, Գ. Ղափանցյանի բերած հսկայական նյութը, իհարկե քննադատաբար, օգտագործվել ու օգտագործվում է հետագա ուսումնասիրողների կողմից՝ օգնելով նաև դրա հիման վրա հանգելու նոր եզրակացությունների:

Հայ պատմագիտության համար կարևոր նշանակություն ունեն Գ. Ղափանցյանի «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը»¹² և «Խեթական աստվածները հայերի մոտ»¹³ աշխատությունները, որոնք մեծ նյութ են տալիս հայ ժողովրդի ծագման հարցերը լուծելու համար: Այստեղ արդեն մենք գործ ունենք ոչ միայն մեծ լեզվաբանի, այլ նաև մեծ պատմաբանի

¹¹ Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմություն. Երևան, 1940:

¹² Գ. Ղափանցյան. Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը. Երևան, 1940:

¹³ Գ. Ղափանցյան. Խեթական աստվածները հայերի մոտ. Երևան, 1940:

հետ, որի աշխատություններին հաճախ են դիմում պատմաբանները հայ ժողովրդի կազմավորման հարցերը քննելիս: Այս բնագավառի աշխատությունների մեջ առանձնակի տեղ է գրավում «Հայասան՝ հայերի բնօրրան» աշխատությունը¹⁴, որտեղ հեղինակը, առաջինը լինելով, մի կողմից քննության է առնում «Հայասա-Ազգի» պետության, որպես քաղաքական միավորի, քաղաքական ու մշակութային փոխհարաբերությունները հին փոքրասիական պետությունների ու ժողովուրդների հետ՝ փորձելով որոշել նրա պատմական տեղն ու դերը առ պետությունների շարքում, մյուս կողմից՝ ձգտում է որոշել հայասա-Ազգի ցեղախմբերի ու նրանց լեզուների դերը հայ ժողովրդի ու հայոց լեզվի կազմավորման դործընթացում: Այստեղ հատուկ քննության նյութ է դարձել այն ամենը, ինչ որ կապված է հայասների հետ, երբ նրանք իրենց նախնական օրրանից (Եփրատի և Զորոխի հովիտներից) դեռ չէին շարժվել դեպի հարավ: Հատկապես ուսումնասիրված են Հայասա անվան և այդ երկրի տեղագրության մեկնաբանության պատմությունը, դրան (Հայասա երկրին) վերաբերող խեթական արձանագրությունների տվյալները, հայերենի և հայ պաշտամունքի փաստերը, մշակութային-պատմական իրավիճակը, անդրեփրատյան ցեղերի և ժողովուրդների կապը հայերի հետ և նրանց դերը հայերի կազմավորման գործընթացում, կիմերսկությունների ազդեցությունը Փոքր Ասիայի քաղաքական դրության վրա մ. թ. ա. VIII—VII դդ., հայերի ծագման հնդեվրոպական կոնցեպցիան, Armina անվան ծագումը, հայերենի ուրարտաբանություններն ու խուրիաբանությունները և այլն: Հենվելով հատկապես լեզվաբանական տվյալների վրա, այն է՝ ուսումնասիրելով հայասերենի մնացորդները՝ անձնանունները, աստվածների անուններն ու տեղանունները և փորձելով դրանց հիման վրա եզրակացություն անել այդ լեզվի մասին, նա շոշափում է հայերի ու հայերենի կազմավորման գործընթացի հետ կապված խիստ կարևոր հարցեր: Ընդունելով Պ. Կրեյմերի այն կարծիքը, որ Հայասա (Haiaasa) անվանումը կազմված է haja կամ hajo հիմքից և գտնելով, որ դրանից է գալիս հայ ժողովրդի հայ էթնիկական անվանումը, Ղափանցյանը, հենվելով իր նախորդ և այս աշխատանքում կատարած ուսումնասիրությունների վրա, գալիս է այն եզրակացության, որ Հայասա-Ազգին է եղել հայ ժողովրդի կազմավորման բնօրրանը: Ահա, խիստ համառոտ, նրա տեսակետը: Մեր թվականությունից 15 դար առաջ գոյություն է ունեցել Հայասա-Ազգի երկիրը որպես հայասական ցեղախմբի պետություն, որը տարածվել է Եփրատի, Զորոխի և Արաքսի վերին հոսանքների միջև ընկած տարածքում՝ մի կողմից՝ խեթական, մյուս կողմից՝ քարթվեական¹⁵ ժողովուրդների հարևանությամբ: Հայասցիների տեղաշարժի ու տարածվելու ընթացքում, այլ ցեղախմբերի և ժողովուրդների հետ պատմական շփումների հետևանքով նրա մեջ ներառվել են այլ էթնիկական տարրեր: Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը պատմական երկարատև պրոցես էր: «Պարզ է, որ նախասկզբնական Հայաստանը (=Հայասա-Ազգին) և հետագայի անդրտավորության Հայաստանը, այսինքն՝ խուրիական Արիմե և Շուպրիա երկրամասերը նոր հայերի տեղաբաշխման ու ձևավորման միևնույն բոլորված պրոցեսի սկիզբն ու վերջն են՝ սկսած մ. թ. ա. VII դարի սկզբից, վերջացրած մ. թ. ա. III-ով և II-ի սկզբով, երբ Արտաշեսի և Զարեհի օրոք լիովին ձևավորվեց այդ ժողովուրդը»¹⁶: Զուգահեռ անցկացնելով հայ ժողովրդի կազմավորման հետ՝ Ղափանցյանը գտնում է, որ հայերենը սկիզբ է առնում հայասական ցեղերի լեզվից, որն ազգակից է խեթերենին, պալայերենին, քարթվեական լեզուներին, հատկապես նրա մեզրելա-ճանական բարբառներին: Հայասերենը, որն ընկած է պատմական հայերենի հիմքում, հետագայում ուժեղ փոխակերպության է

14 Гр. Капанцян. Историко-лингвистические работы. Т. I, Ереван, 1956.

15 Ղ. Ղափանցյանը գործածում է վրացական ժողովուրդներ և վրացական լեզուներ անվանումները:

16 Гр. Капанцян. Историко-лингвистические работы. Т. I, с. 252.

ենթարկվել՝ խաչավորվելով մի կողմից հնդեվրոպական լեզուների, մյուս կողմից Արիմե-Շուպրիա երկրի խուռիական լեզվի հետ: Նա հենց դրանով էլ բացատրում է հայերենի և խուռի-ուրարտական լեզուների ազգակցական որոշ տարրերը: Ըստ նրա՝ միայն հայասցիների, արմինախուռիների ու հնդեվրոպացիների առաջատար էթնիկական միավորումները կարող էին կազմավորել հայ ժողովուրդը՝ մշակութային, քաղաքական ու սոցիալական փոխներգործման պայմաններում: Իսկ Ուրարտուի՝ ընդարձակ տարածքի բազմաթիվ ցեղերն ու ժողովուրդները կլանվել են կազմավորված այդ ժողովրդի մեջ, և նրանց լեզուներն էլ ձուլվել են վերջինիս լեզվին կամ շատ-շատ կարող էին հիմք ծառայել որոշ բարբառների տարբերակման համար¹⁷: Այստեղ ևս Ղափանցյանը հարում է ասիանիկ լեզուների կոնցեպցիային, որոնց մեջ մտցվում էին բոլոր փոքրասիական և հարևան ցեղերի լեզուները (ինչպես հին անատոլիական հնդեվրոպական, այնպես էլ «ալարոդական» կամ խուռի-ուրարտական): Մի բան, որ այստեղ ևս խանգարում է նրան ճիշտ մեկնաբանել հայասերենի և մյուս փոքրասիական լեզուների փոխհարաբերությունները: Հայասերենը համարելով «ասիանիկ», նա միաժամանակ նշում է այդ լեզվի հնդեվրոպաբանությունները, որոնք համարում է խաչավորման հետևանք: «Հայոց լեզվի պատմության» մեջ, որը հայոց լեզվի կազմավորման, բնույթի ու պատմության ուղղությամբ նրա կատարած հետազոտությունների ընդհանրացումն ու ամփոփումն է, մեծ գիտնականը շարունակում է պնդել, որ հայասերենը «ասիանիկ» բնույթ ունի, թեև մեծ տեղ է հատկացնում նրա հնդեվրոպական տարրերին: Հետագա ուսումնասիրությունները, սակայն, ցույց տվեցին, որ պետք է խոսել ոչ թե հայասերենի հնդեվրոպական տարրերի, այլ հնդեվրոպական բնույթի մասին: Այդպիսի եզրակացության է եկել, մասնավորապես, ակադեմիկոս Գ. Զահուկյանը իր «Хайасский язык и его отношение к индоевропейским языкам» աշխատության մեջ¹⁸:

Մեծ է Ղափանցյանի ավանդը հայ-քարթվելական լեզվական առնչությունները ուսումնասիրելու բնագավառում: Իր «О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков» աշխատության մեջ¹⁹ հատուկ քննության առնելով այդ հարցը և հենվելով խեթական արձանագրությունների վրա՝ նա ասի միտքն է հայտնում, որ հայոց լեզվի կապերը կովկասյան լեզուների, մասնավորապես նրա արևմտյան ճյուղի լեզուների հետ շատ հին է, ունի շուրջ 3500 տարվա պատմություն: Ահա այդ ժամանակներից էլ հայերեն և լազա-մեգրելական լեզուներում կան մի շարք ընդհանուր բառեր, ինչպես օրինակ՝ ականջ, բարդի, բախել, ճուր, երինջ, որոգայթ, սոխ, որովայն, փիթ և այլն: Նա փորձել է պարզել այդ ընդհանրությունների բնույթը և ցույց տվել այն փոխառությունները, որոնք իր կարծիքով հայերենից են անցել լազա-մեգրելական լեզուներին (քան, մակարդ, մաւագ, մսուր, փայտ, գերանդի, երկաթ և այլն), և նրանք, որոնք հայերենին անցել են վերջիններից (կնուն, ոչխար, ճանն, լակոտ, ճոճել և այլն): Նա հատուկ ուսումնասիրել և քննել է նաև հայերեն-պալայերեն²⁰, հայերեն, աքքադերեն և ասուրա-բաբելերեն լեզուների լեզվական ընդհանրություններն ու փոխառությունները²¹:

Ղափանցյանի ուշադրությունից չի վրիպել հայերենագիտության ոչ մի բնագավառ: Նա նաև հմուտ բարբառագետ էր: Ուսումնասիրելով բարբառները՝ նա դրանց ընձեռած նյութը օգտագործել է հայոց լեզվի պատմության, հայոց

¹⁷ Նույն տեղում, էջ 248:

¹⁸ Г. Джаукян. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964; է. Աղաջան. Հայ լեզվաբանության պատմություն. Երևան, 1962:

¹⁹ Гр. Капанцян. О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков. Ереван, 1952.

²⁰ Г. Капанцян. Палайский язык. Ереван, 1952.

²¹ Գր. Ղափանցյան. Ասուրա-բաբելական բառեր հայերենում. Երևան, 1945.

լեզվի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի զարգացման գործընթացը հետազոտելիս, հատուկ մենագրություն է նվիրել իր մայրենի բարբառի՝ Աշտարակի խոսվածքի ուսումնասիրությանը:

Մեծ հայագետի գիտական արտագրանքի մեջ կարևոր տեղ են գրավում հայ ժողովրդի հոգևոր ու նյութական մշակույթի տարբեր կողմերի քննությունը, մասնավորապես ազգագրական-դիցաբանական ու պատմահնագիտական ուսումնասիրությունները: Դրանցից կարելի է հիշատակել հատկապես «Արա գեղեցիկի պաշտամունքը»²²: Այն հայկական առասպելաբանությանը նվիրված մի շատ արժեքավոր գործ է, որտեղ մատենագիտական համակողմանի քննության ու լեզվաբանական-ստուգաբանական հետազոտությունների հիման վրա և օգտագործելով համեմատական դիցաբանության ու առասպելաբանության տվյալները՝ հեղինակը փորձում է ցույց տալ հայերի կամ նախահայերի մշակութային մեծ դերը: Համեմատական քերականության միջոցով նա գալիս է այն եզրակացության, որ Արայի պաշտամունքը հայկական հողի վրա, իր վերջնական ձևակերպվածությամբ, մեռնող ու հարություն առնող աստվածություն հայկական արտահայտությունն է, որն արտացոլվել է «Արա գեղեցիկ և Շամիրամ» առասպելում: Հատուկ քննության է ենթարկվում այն հարցը, թե ինչ ազդեցություն է գործել մեռնող ու հարություն առնող աստվածության պաշտամունքը հայ ժողովրդի հավատալիքների վրա: Հեղինակը անդրադառնում է նաև մեր նախնիների հավատալիքների հարցին՝ կապված երկրագործության, գարնան ու բնության զարթոնքի հետ: Դրանք քննվում են ըստ Հայաստանի տարածքում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների, հատկապես քարակոթողների: Վերջիններիս ուսումնասիրությանը Ղափանցյանը նվիրել է առանձին աշխատություն²³, որտեղ, դրսևորելով հայ մշակույթի իր խոր իմացությունը, քարակոթողների մանրագնին հետազոտության վրա գալիս է այն եզրակացության, որ դրանք կապված են պաշտամունքային գանազան մոտիվների հետ, մարմնացնում են գարնանն ու բնության զարթոնքին անհամբեր սպասող հողագործի ու անասնապահի ազնկալությունները և որ հայ ժողովուրդը անհիշելի ժամանակներից ունեցել է գարնան, բնության զարթոնքի ու արգասավորման աստվածացում: Այստեղ ևս ուսումնասիրությունը կատարվում է համեմատական քննությամբ՝ հայերի և փոքրասիական այլ ժողովուրդների դիցաբանական առնչությունները բացահայտելու նպատակով:

Մեծ գիտնականի լեզվաբանական և պատմագիտական աշխատությունների խիստ համառոտ նկարագրությունից իսկ երևում է, թե ինչքան բազմակողմանի ու խոր է եղել նրա գիտական գործունեությունը և թե ինչքան մեծ կարևորություն ունի նրա գիտական ժառանգությունը: Ծիշտ է, նրա աշխատություններում հիմնավոր տեսակետների կողքին կան նաև ոչ հավաստի ստուգաբանություններ, սակայն որքան էլ վիճելի լինեն գրանք, այնուամենայնիվ գիտության և մասնավորապես հայագիտության համար խիստ կարևոր են և մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Շուրջ 45 տարվա իր գիտական գործունեության ընթացքում Ղափանցյանը իրեն հատուկ պրպտող մտքով, մեծ ջանասիրությամբ ու նվիրվածությամբ ուսումնասիրում էր հայոց լեզվի պատմության հնագույն շրջանը, հայերենի ու հայերի կազմավորման և սրանց հետ կապված բազմաթիվ հարակից խնդիրներ, մասնավորապես Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդների պատմությունն ու սեպագիր արձանագրություններով ավանդված լեզուները և իր հետազոտություններով խոշոր գործ կատարեց ինչպես հայ լեզվաբանության, այնպես էլ պատմագիտության համար:

Ավելի քան 30 տարի է անցել այն օրից, երբ կյանքից հեռացավ մեծ գիտնականը: Այդ ժամանակաշրջանում հսկայական քայլերով առաջ է գնացել

²² Գր. Ղափանցյան. Արա գեղեցիկի պաշտամունքը. Երևան, 1945:

²³ Г. Капанцян. О каменных стелах на горах Армении. Ереван, 1952.

հայագիտությունը. նրա ուսումնասիրությունների շատ արդյունքներ, որոնք ժամանակին վիճարկվել են, հաստատվել են նոր հետազոտություններով ու տվյալներով: Ղափանցյանի՝ գիտության այդ անխոնջ մշակի աշխատությունները մտել են հայագիտության ոսկե գանձարանը, և նրա աշակերտները, որոնցից շատերը հայտնի հայագետներ են, շարունակում են իրենց ուսուցչի հայրենանվեր գործը:

ВЫДАЮЩИЙСЯ АРМЕНОВЕД-ЯЗЫКОВЕД
(К 100-летию со дня рождения Григора Капанцяна)

Доктор филол. наук Н. А. ПАРНАСЯН

Резюме

Выдающийся советский армянский языковед-арменовед, академик АН АрмССР Григор Айвазович Капанцян—ученый, богатое наследие которого является неоценимым вкладом в арменистику. Научная деятельность Г. А. Капанцяна протекала в основном в двух направлениях—общелингвистическом и арменоведческом, которым посвящены фундаментальные работы ученого «Общее языкознание», «Хайаса—колыбель армян», «История армянского народа». Более 45 лет своей научной деятельностью Капанцян посвятил изучению древнейшего периода истории армянского языка, процесса становления армянского народа и его языка, роли древних малоазийских народов и языков в этом процессе, их этнических и языковых соотношений. Капанцян был одним из крупных советских специалистов по древним клинописным малоазийским языкам: хеттского, урартского, палайского и хурритского. Изучению Урарту и урартского языка посвящен уникальный труд «История Урарту». Велик вклад Капанцяна также в изучении культурно-исторических ценностей армянского народа, его мифологии и древних каменных стел. Своими фундаментальными работами и исследованиями знаменитый арменовед занял заслуженное место в плеяде выдающихся представителей кавказоведов и общего языкознания.